թեան ցողեսցէ ի ոսկերս նոցա եւ բուսուսցէ օրն վերջին եւ լսել տացէ զերանութեան բարբառն որ ասէ. Եկայք օրհնեալք հօր իմոյ: Մանաւանդ զբչի Անտոն իրիցուն հօրն տէր Ստեփաննոսին եւ մօրն Հռիփսիմէին եւ ամենայն արեան մերձաւորացն, ընթերցողաց եւ լսողաց եւ զողորմի ասող քրիստոնէից ողորմեա Քրիստոս Աստուած մեր ամէն:

Յաղագս յայտնելոյ ջալալոցն եւ սասալիկ սովուն եւ մարդակերք գայլոցն եւ թագաւորաց անհաշտ խռովութեանց եւ այլ եւս աւարառութեանց եկեղեցեաց այրմանցն զոր գրեալոց եմ ըստ տկար մտաց իմոց: Եթէ տէր կամենայ այլում ժամու պատմեսցուք ի լսելիս ժողովրդեանս. ամէն: Զկնի աւարման ճառիս թէ ըլայրլի տեսնուք յիշատակ տուողաց եւ կամ աշխատողաց հանգստեան շարականիս փոխ մի աւետարան եւ հոգւոց ասել մի ճանճրանայք ով հարք իմ եւ եղբարք. որպէս ասէ Տէրն, զի Արժանի է մշակն վարձու իւրոյ Ռ յաւիտեանս ամէն: Հայր մեր:

Ճառ Բ. Որպէս սկիզբն ճառիս յիշեցաք թէ ի ժամանակս սուլթան Մուրատին չինեցան եկեղեցիքս. այս Մուրատ թագաւորն ԻԹ. ամ թագաւորեալ մեռաւ եւ եւ սորա թվին ՊՂԹ (1450). թագաւորեաց սուլթան Մէհէմմէտ. սա էառ Ստամպօլ. ՁԲ (1453) թվին եւ թագաւորեալ ամս ԼԱ. մեռաւ թվին ՁԼ (1481). թագաւորեաց սուլթան Պայազիտն ամս ԼԱ. եւ մեռաւ: Թվին ՁԿԱ. թագաւորեաց սուլթան Սէլիմն. սա էառ զՏիարպէքիր. թվին ՁԿԵ (1516) դարձեալ էառ զՇամ. թվին ՁԿԶ (1517):

Դարձեալ էառ Մսր. թվին ՁԿԷ. սա չարացաւ եւ արար առաջին ողժողով քրիստոնէից: ՁԿԸ թվին եւ թագաւորեալ. ամս Թ մեռաւ: Թվին ՁՀ (1521) թագաւորեաց սուլթան Սիւլէյման. սա զնաց ի վերայ Պուտիմին. ՁՀԷ (1528) թվին եւ էառ զնա. դարձեալ էառ զՊաղտատ. ՁՁԴ (1535) թվին. դարձեալ զնաց ի վերայ Բիջայ. ՌԺԷ (1568) թվին եւ անդ մեռաւ ի Սէյիտվար. թագաւորեալ ամս ԽԵ: Եւ էառ նորա թվին ՌԺԵ (1556) թագաւորեաց սուլթան Սէլիմն. սա էառ զԿիպրոս որ է Ղբրրզ. ՌԺԹ թվին. եւ թագաւորեաց. Թ. տարի: Եւ էառ սորա թագաւորեաց. ՌԻԴ թվին սուլթան Մուրատն. քանզի առաջին ճառին յիշեցաք թէ Օսմանցոց իշխանութիւնն ձգեցաւ յարեւելս կոյս որ է Պարսկաստան. այս թագաւորս Մուրատ առաւել արիացաւ եւ տիրեաց ի Թէվրուզ եւ Երեւան, ի Կէնճէ եւ զԱրաշ. զՇամախի մինչեւ ի գուռն Ալանաց. ԺԵ տարի հեծելաշարժէն քուլլու աշխարս աւերեցաւ:

Ընդ այն ժամանակն էր թագաւորն Պարսից. շահ Աբբաս զեռ նորընծայ եւ առաքեաց զեսպանս հանդերձ զանազան ընծայիւք. եւ եղպորն իւր պատանդս որ է ըռէհին առ թագաւորն Մուրատ. վասն հաշտութեան. զէրէ այնչափ երկուցեալ էր մինչ զի զթախտըն վերուց ի ըռսպահան քաղաքէ եւ տարեալ ի ներսին Խորասան եւ անդէն առաքեաց զէլչիսըն. եւ թագաւորն ընկալաւ զնծայսն եւ արար հաշտութիւն. եւ խաղաղացաւ երկիրն ամենայն ողորմութեամբ Աստուծոյ: Սա թագաւորեաց ամս. Ի. եւ էառ սորա թվին ՌԽԴ. թագաւորեաց սուլթան Մէհէմմէտ ամս. Ժ. ի սորա ժամանակն բազում քաղաք եւ երկիր աւերեցաւ զի ոչ կարէր վարել զթագաւորութիւնն ծառայքն եւ պարոնայքն ամենեքեան ապստամբեցան եւ երես դարձուցին ի նմանէ. քանզի ինքն մխայն ոչ էր իշխանաւոր. որ ժամ տայր զքաղաք մի փաշայի միոյ. եւ տան աւուր կամ քսան աւուր մայրն կամ քոյրն կամ իւր կինն կամ վէզիրն տային այլոց փաշայի եւ առնուին զրաղում կարմիր դահեկան. զՀամիդ որ է Տիարպէքիր. Զ. ամսոյ մէջ. Թ. փաշայի եաւն. եւ եկեալ փաշայքն կամ մուսէլիմն, զիսէին որ բանի յեաքն փուչ է նոքա այլ սկսանէին ի կողոպտել եւ ի թալնել զքաղաքն եւ երկիրն. ահա այսպիսի կերպիւ ամենայն քաղաքն կամ գեղորայքն եւ զինչ երկարեցից ոչ կարեմ գրով պատմել զաւեր աշխարհս տէրութեան Օսմանցոց ի ձէլալոց բազմութեան, քանզի ցանցրութիւն համարեցայ անուանէ զբել զձէլալիքն: Եւ ի սոցա պատճառէ եղեւ սով սասալիկ թվին. ՌԾԵ (1606) էն մինչեւ ՌԾԹ (1610). այս ի մէջ երկուց մեծաց ծովուցն՝ այսինքն սպիտակ ծովուն եւ սեաւ ծովուն ի մերձակայ գաւառացն Ստամպոլէն մինչեւ ի գաւառսն Թէրուզիյ ի Բաղտատէն մինչեւ ի Տէմուր գափուն այսքան եղերաց մէջն եղեւ ահաբին սովն որ մարդ զմարդոյ միսն կերան. այլ եւ զշունս եւ զկատուս եւս: Ահա գրեալ եմ ովկիանոսէն կաթիլ մի թէ կամիք մի ըստ միոջէ իմանալ ով եղբարք իմ զԱռաքելս պատմագիրն կարդա. եւ զանպիտանս իշեա:

Եւ էլ համբաւս այս մինչեւ ի շահ Աբբաս թագաւորն պարսից. եւ ինքն եւս լրտեսեաց եւ իրրեւ ստուքեաց զաւերն եւ զանմիաբանութիւնն Օսմանցոց. եւ եկեալ բազում զօրօք ի թվին ՌԾԲ. եւ եկեալ տիրեաց զքաղաքն զոր օսմանցիքն առեալ էին. եւ բազում օճիս գործեաց զանազան կերպիւ քանզի. Լ. զոնսիս լայնութիւն եւ Լ. երկայնութիւն երկրիս զմարդիքն քշեալ տարաւ. եւ զգահանն եւ կարասիքն հրով այրեաց. քանզի զայս հնարս արար աշխարհաւեր շահ Աբբաս. զի մի եկեալ Օսմանցոց զօրքն յախիզեսցին ինքեան. զայսպիսի եւ այլ անպատմելի նեղութիւնս կրեցին մանաւանդ ողորմելի ազգս Հայոց. քանզի էջմիածնայ եկեղեցիքն քայքայեալ աւերեցան եւ եղեւ բնակութիւն գազանաց անասնոց եւ թռչնոց ի բազում ժամանակս: Ահա այս ամենայն եղեւ վասն մեղաց մերոց եւ զուք հարք իմ եւ եղբայրք մի ցանցրանայք կարդալոյ եւ լսելոյ. եւ զաշխատողս մի մեղադրէք. այսուհետեւ դարձուսցուք զրանս մեր ի գործս կոնդակիս:

Կոնդակ Բ. Ահա դարձեալ գրեսցուք զթուականս ՌԾԲ. զայն վերադրեալ ճէլալոյն միջէն անիծեալ հասան պէկ անուն ճէլալի եկեալ է ասա քաղաքս քութահիու եւ այրեալ է զքաղաքս եւ Բ. եկեղեցիքն ի հետ այրեցան զսուրբ Աստուածածինն եւ զսուրբ Թորոսն: Քրիստոնեայքն եւոյ ժողովեցան ողորմութեամբն Աստուծոյ վերսին նորոգեցին, որ են այսոքիկ. նախ տէր Դաւիթին ազան պալին. Ռ. ստակ եւ այլն: Միահամուռ ահա այսոքիկ են եղբարք. լի սրտիւ Աստուած ողորմի ասացէք եւ Աստուած ձեզ ողորմի եւ փոխանակ զայս ձեռագործ տաճարիս աշխատեր են թէ արդեամբք եւ թէ այլ կերպիւ աշխատաւորաց տացէ նոցա տէր Աստուած զանձեռագործ խորան եւ զրեսցէ զանուանս նոցա ի դպրութեան կենաց ամէն: Ի թվին ՌՀԲ. եկն ասա Սեբաստացի Մելքիսեթ վարդապետն եւ ասա վախճանեցաւ. եւ ամփոփեալ թաղեցինք ի դաւիթս եկեղեցոյ եւ եւոյ եկեալ ասկականք սորա եւոն յիշատակ սուրբ Աստուածածնայ. Ա. փիլոն Ա. խալի. Ա. սարգաւարտ լի սրտիւ Աստուած ողորմի ասացէք: Աստուած ողորմի Թորոսի հոգւոյն եւ. Մ. ստակ եւ այլն: Այսչափս բաւականացի եւ գինացեսցն այլում ժամու կարդասցուք թէ տէր կամեսցի. ի լսելիս ժողովրդեանն: Որ ողորմի Քրիստոս Աստուած զայս յիշատակէն տուողաց եւ զրեսցէ զանուանս նոցա ի դպրութեան կենաց. եւս առաւել որ ասա ժողովեալ հարցդ եւ եղբարց: Մանաւանդ մեղաւոր եւ անարժան եւ ամենայն բարեաց թափուր զբչի Անտոն իրիցուն հօրն տէր Ստեփաննոսի եւ մօրն Հռիփսիմէին եւ ամենայն արեան մերձաւորացն ընդերձողաց եւ լսողաց եւ զողորմի ասողաց ողորմեա Քրիստոս Աստուած մեր. ամէն: Զկնի աւարման ճառիս թէ արժան տեսնուք յիշատակ տուողիս եւ կամ աշխատողիս հանգստեան շարականիս. եւ փոխ մի աւետարան եւ հոգւոց ասել մի ցանցրանայք: Յաւիտեանս ամէն. հայր մեր որ յեր՞՝:

ԳԵՏՄՈՒԹԻՒՆ ԼԵԶՈՒԻՆԵՐՈՒՆ ՏՈՀՄԻ

(ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՈՒՐՈՒԱԳԾԵՐ)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Աշխատասիրեց՝ ՅՈՎՍԷՓ ԹԱԴԷՈՍԵԱՆ

(Շարունակութիւն:)

ԳԼՈՒԽ Ը.

ԳՆԴԱՊԵՏ ՂԱԶԱՐ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆՑ [1]

Յովակիմ Ղազարեան Լազարեանցի կրտսեր որդին էր՝ գնդապետ Ղազար Լազարեանցը:

Սրա անունը սերտօրէն կապուած է 1827—1828 թթ. ռուս-պարսկական եւ մասամբ էլ ռուս-տաճկական 1829 թ. պատերազմների հետ եւ մասնաւորապէս 40·000 պարսկահայերի գաղթի հետ դէպի «Հայկական նահանգը»:

Մ. Մսերեանը եւ Պրոֆ. Զինովիւը գրեթէ տեսութիւններ չեն տալիս նրա անձնական կեանքի մասին. չեն հաղորդում անգամ նրա ծննդեան ու մահուան թուականները...:

Նրա շատ համառօտ ծառայութեան ցուցակից եւ կայսերական հրովարտակներից մենք իմանում ենք միայն հետեւեալը.

---

[1] Այս կենսագրականը կազմելիս մենք օգտուել ենք գլխաւորապէս՝

ա. «Նկարագիր Գաղթականութեան Հայոց ի Պարսկաստանէ ի Ռուսաստան», 1832: Ի Մոսկով: ի տպագրատան Հայկական ձեմարանի Տեսրդ Լազարեանց, էջ 104:

բ. Մ. Մսերեանց, «Ցիշատակարան» եւայլն: Հեղինակի տեղեկութիւնները գրեթէ ամբողջովին քաղուած են մեր առաջին աղբիւրից:

գ. Վ. Պոտտս, «Վերածնութիւն Հայաստանի», Պարիս 1904:

դ. Ա. Երիցեան, «Կովկասահայք» եւ այլն:

© National Library of Armenia

Գնդապետ Ղազար Լազարեանցը ստացել է իր կրթութիւնը Ճանապարհների Հաղորդակցութեան դպրոցում, ուր մտել է 1810 թուին:

1813 թ. սկսում է իր զինուորական ծառայութիւնը Հուսարների Սումսկի գօրագունդի մէջ. մի տարի անց՝ 1814 թ. փոխադրւում է Թիկնապահ (գվարդիա) հուսարների գօրագունդը:

1826 թ. յունուար 28ի կայսերական հրովարտակով ստանում է գնդապետի աստիճան:

Ղազար Յ. Լազարեանց

Որպէս տանձին յանձնարարութեանց պաշտօնեայ կոմս Պասկեւիչի մօտ, նա մասնակցել է 1828 թ. օգոստոս 5ի եւ 9ի ճակատամարտներին՝ Ախալցխա ամրոցի գրաւման ժամանակ եւ իր ցոյց տուած այդ կռիւներում քաջագործութիւնների համար ստացել է Ս. Անդրէի 2րդ աստիճանի շքանշան 1829 թ. սեպտ. 16ին:

1828 թ. նա մասնակցել է նաեւ Ղարսի նուաճման կռւում եւ նոյնպէս է յայտ բերել ուշագրաւ քաջագործութիւններ:

Պարսկահայերի գժուարին եւ բարդ, նաեւ մեծ շտապողականութեամբ տարուած գաղթի կազմակերպութիւնը մեծ յաջողութեամբ կատարել է եւ, ինչպէս ինքն է վկայում իր պաշտօնական գրութեան մէջ առ կոմս Պասկեւիչը՝ — «ընկալայ ի ձէնջ զքաղցրն վասն իմ զգաստութիւն»:

Նոյն այդ գաղթի ժամանակ Գնդապետ Լազարեանը ի յայտ էր բերել մեծ եռանդ, վարչական բարձր կարողութիւններ ու մեծ ազգասիրութեան ջերմ եւ անկեղծ զգացումներ, ինչպէս եւ մարդասիրական վեհ հոգի, որով մեծապէս թեթեւացրել էր գաղթականների կրած թշուառութիւնները:

Բայց ինչպէ՞ս պատահեց, որ գնդապետ Ղազար Լազարեանը ստանձնեց պարսկահայերի գաղթի ղեկավարութիւնը:

Կոմս Պասկեւիչը — ասում են մեր յիշեալ ազբիւրների հեղինակները միաբերան — Կովկասի ռուսաց զօրարանակի ընդհանուր հրամանատարը, ի նկատի առնելով, որ ռուս-պարսկական պատերազմը, որի նախապատրաստական աշխատանքների մէջ էր ռուս սպարապետը, պիտի տարուի այնպիսի շրջաններում, ուր հայ ազգաբնակութիւնը և՛ թիւ էր, և՛ զրակ, եւ որ բացի այդ — նոր նուաճուելիք գաւառները պարսից ու տաճկաց տիրապետութեան օրով ամայացել էին ու աւերուել, միաք է յղանում հայերին Պարսկաստանից գաղթեցնել այդ շրջանները: Այդ նպատակով Սպարապետը իր այդ մտադրութիւնը լաւագոյն կերպով իրագործելու համար անհրաժեշտ է համարում իր ձեռքի տակ ունենալ մի հայ պաշտօնեայ, որ դիրք ունենար եւ միաժամանակ վայելէր հայերի վստահութիւնը, լինելով նաեւ հաւատարիմ ռուսաց պետութեան: Եւ նա ընտրում է այդ պաշտօնի համար գնդապետ Ղազար Լազարեանին, որը ամէն կողմից լիովին համապատասխանում էր ու բաւարարում այդ պայմանները:

Պասկեւիչը գիտէր, որ գնդապետ Ղազար Լազարեանը հռչակաւոր տոհմի զաւակ էր, որ հարուստ էր, որ լաւ կրթուած, ամենքից սիրուած ու յարգուած զինուորական էր Պետերբուրգի բարձր շրջաններում:

Եւ ահա՛ 1827 թ. ապրիլին Պասկեւիչը գիմում է կայսեր եւ յայտնելով, թէ «կարեւորութիւն ունիմ մի այնպիսի ատենանաւորի, որ ամենայնիւ հաւատարիմ լինի Տէրութեան եւ միանգամայն մեծարգոյ եւ պատկառելի Հայոց աչքում, խնդրում եմ, որ Գնդապետ Լազարեանը, որն այժմ գտնւում է կոմս Կոմարովսկու հրամանատարութեան ներքոյ, ուղարկուի ինձ մօտ ի պաշտօն ատանձին յանձնարարութեանց»:

Կայսրը տալիս է. իր համաձայնութիւնը, եւ գնդապետ Լազարեանը անմիջապէս մեկնում է Կովկաս եւ ներկայանում Պասկեւիչին, որը ընդունում է նրան սիրալիրօրէն, նշանակում է Թաւրիզի քաղաքապետ (1827 թ. հոկտեմբերին) եւ ապա տալիս զրաւոր անհրաժեշտ հրահանգներ գաղթի կազմակերպութեան վերաբերմամբ, ձեւակերպուած 19 յօդուածների մէջ, 1828 թուի փետրուար 26ի թուով:

Այդ հրահանգների մէջ ամենից ուշագրաւ յօդուածը Յրդն է, ուր ասուած է, որ՝ չպիտի ստիպել, առաւել եւս բռնութիւն գործադրել հայերին գաղթեցնելու համար, այլ միայն համոզել ու բացատրել, որ հայերը ընդունելով քրիստոնեայ կայսեր հպատակութիւնը, նրանք ձեռք կը բերեն խաղաղ եւ ապահով կեանք՝ «ընդ հովանաւորութեամբ բարեբար օրինացն ռուսաց[2]»:

Գրեթէ մի եւնոյն ժամանակ Ներսէս Աշտարակեցին, որ նոյնպէս մտահոգուած էր պարսկահայերի գաղթի խնդրով, ուզում էր թէ փրկել նոցա պարսից ծանր լուծի տակից եւ թէ չենցնել հայրենի ամայի երկիրը:

«Էջմիածնի բարօրութեան համար — գրում է Երիցեանը — կարեւոր էր Արարատեան աշխարհը լցուի, չենանայ հայ բնակիչներով»: Այս նպատակով, «Ներսէսը դեռ 1827 թ. դեկտեմբերին գրեց Պասկեւիչին, թէ հարկ է գաղթեցնել հայերին Պարսից տիրապետներից դէպի ռուսաց նուաճուած երկիրը[3]»:

Այսպիսով ռուս-պարսկական պատերազմի երկու մեծ գործիչները միւնոյն միտքն են յայտնում, որն եւ գործադրւում է գնդապետ Լազարեանի գործօն օժանդակութեամբ:

Հետագայ դէպքերը ցոյց տուին, որ Պասկեւիչը չէր սխալուել իր ընտրութեան մէջ, յանձնարարելով գնդ. Լազարեանին պարսկահայերի գաղթի ղեկավարութիւնը:

Պարսկահայերը, տեսնելով ռուսաց զօրաբանակում մի բարձրատիճան հայ զինուորականի, այն էլ մեծահամբաւ Լազարեան տոհմից, վերաբերուեցին ամենայն վստահութեամբ ու սիրով դէպի նա եւ շտապեցին յայտնելու նրան իրենց պատրաստակամութիւնը գաղթելու Ռուսաստան եւ հետեւել նրա խորհուրդներին:

Հապա թէ տարածուեցաւ համբաւն, թէ «Լազարեան եղեւ քաղաքապետ Դաւրիժու, անյապաղ յամենայն նահանգաց Արարատեանի, արագ փութացան Հայք ի Դաւրէժ: «Աղգակից մեր ես, — ասէին նոքա ցՀազարեանն — բարեբաստ լի՛ր վասն մեր առ բարեսիրտ եւ մեծ արքայն ինքնակալն համայն ռուսաց. բարեբա՛ս լեր առ երեւելի զօրապետն նորա: Նուիրաբերեմք զանձինս մեր ընդ հովանեաւ աջոյն Նիկողայոսի: Ուրախ եմք մեք կեալ եւ մեռանիլ ընդ տէրութեամբ նորա[4]»:

Լազարեանը անմիջապէս տեղեկացրեց Պասկեւիչին, որ հայերը պատրաստակամութիւն են յայտնում գաղթելու Ռուսաստան:

1828 թ. Դեկտեմբեր ամսում ռուսները կապեցին հաշտութեան նախնական դաշն պարսիկների հետ: Այդ դաշնագրութեան մէջ Պասկեւիչը յատուկ պայման էր դրել, որ հայերը ազատ պիտի լինեն գաղթելու Ռուսաստան եւ որ պարսիկները արգելք չպիտի լինեն գաղթին:

Պարսիկները ստիպուած տրամադիր չէին Դեկտեմբերի պայմանագրերը հաւատարմութեամբ կատարելու, հետեւաբար ռազմական գործողութիւնները վերսկսուեցին: Ռուսաց զօրքը յաղթական ընթացքով առաջ շարժուեց, գրաւեց Արզերիքը, Միանէն եւ պատրաստ էր արշաւելու Թեհրանը գրաւելու, երբ պարսիկները նորից հաշտութիւն խնդրեցին: Պասկեւիչը եւ Պարսից կողմից թագաժառանգ Աբբաս Միրզան հանդիպեցին Թիւրքմենչայ ամրոցում, ուր եւ կնքուեց վերջնական հաշտութեան դաշն:

Ըստ այդ դաշնագրի Պարսիկները պարտաւոր էին վճարել պատերազմական տուգանք՝ 20 միլիոն արծաթ դահեկան աստիճանաւոր եւ ըստ այնմ էլ ռուսաց զօրքը պիտի յետ քաշուէր Երասխ գետի միւս ափը: Այս դաշնագրով էլ նախատեսուեց ու հաստատուեց հայերի անարգել գաղթը դէպի Անդրկովկաս:

Ատրպատական էին եկել նաեւ Ներսէս արքեպիսկոպոսի — որն այդ ժամանակ զօրավար Կրասովսկու եւ գնդապետ Բօրոզինի հետ միասին կազմում էր Հայկական նահանգի ժամանակաւոր կառավարութիւնը, — ներ-

[2] Տե՛ս «Նկար. գաղթ.», էջ 72:
[3] Երիցեան, «Կովկասահայք», Հ. Ա., էջ 312:

[4] «Նկար. գաղթ.», էջ 29—30:

© National Library of Armenia

կայացուցիչները՝ Ստեփաննոս եպիսկ. Ենովքեանն ու Նիկողայոս վարդապետ Արցախեցին քարոզելու եւ յորդորելու հայերին գաղթել հայրենի երկիր:

«Ի սկզբան — գրում է Գնդ. Լազարեանը իր յիշեալ զեկույցի մէջ Պասկեւիչին, — որպէս ինձ՝ նոյնպէս եւ բազմաց թուեցաւ գործդ (գաղթը) ո՛չ դժուարին ինչ[5]», քանի որ հայերը իրենք իրենց իսկ յօժար կամքով էին ցանկութիւն յայտնել գաղթելու Ռուսաստան: Սակայն երբ վրայ է հասնում մամենաը, երբ նրանք պիտի լքէին՝ «գերեզմանք աշխատասէր նախնեաց իւրեանց, որ թողեալ էին նոցա ի ժառանգութիւն գլայնածաւալ եւ զարգաւանդաբեր դաշտս» ... եւ «զներկայ հասատատունն ընդ ապագայ անյայտին փոխանակել», — դժուարացան եւ տատանուեցին. նոյնպէս եւ նեստորականները: Վերջիններս առաջինները եղան, որ պահանջեցին, որպէս զի ռուս կառավարութիւնը վճարի իրենց թողնելիք ստացուածքի ամբողջ արժէքը: Հայերը պահանջեցին միայն մի երրորդ մասը իրենց ամբողջ ունեցածի արժէքի, ու նաեւ որ տրամադրուին փոխադրական միջոցներ շքաւորների, երեխաների, ծերերի եւ անկարողների համար:

Արդարացի էր հայերի պահանջը ու համեստ, քանի որ չնայած ռուս-պարսկական դաշնագրի՝ թոյլատրում էր գաղթողներին ծախել իրենց անշարժ կայքը, բայց այդ անհնարին եղաւ՝ Պարսից կառավարութիւնը խստիւ արգելել էր իր հպատակներին գնել գաղթող հայերի կալուածները:

Լազարեանը շտապեց անձամբ զեկուցել Պասկեւիչին հայերի բաղձանքների ու պահանջների մասին:

Սպարապետը ընդառաջեց հայերի պահանջներին եւ կարգադրեց, որ արքունի գանձարանից փոխառութիւն տրուի հայերին՝ 14·000 ոսկի դահեկան եւ 400 արծաթ ռուբլի հինգ տարի ժամանակով[6]:

[5] Տե՛ս «Նկար. գաղթ.», էջ 81:

[6] Ըստ Ա. Երիցեանի՝ 25·000 ռուբլի էր տրուած 10 տարի ժամանակով, իսկ ըստ Պատմոի՝ 50·000 մատանց անբաւական էր, քանզի «գերդաստանապետք 6—7 թուման էր միայն հանում, մինչդեռ մի հատ-ոք սակ էլ արժում էր 12—15 արծաթ մանէթ»: Վերածնութիւն», էջ 19:

Մ. Մաթեւոսը, հիմնուելով «Ակտերի ժողովածու» վրայ, ասում է, որ ամէն մի գերդաստանի հասնում էր 10 արծաթ ռուբլուց ո՛չ աւել, էջ 43 ծան.:

«Պէտք է խոստովանել — ասում է Պատմոն — որ ռուսների կողմից գաղթականներին տուաջարկած պայմանները, արդարեւ, ծանր էին եւ չէին կարող կասկած եւ երկմտութիւն չյարուցանել:

«Հայոց ունեցած ամբողջ կարողութիւնը՝ իրենց անշարժ կալուածները, տները, պղատու այգիք եւ արգաւանդ դաշտերն էին երեսի վրայ ձգելու եւ հեռանալու: Բնական էր, ուրեմն, որ նոքա պահանջէին Ռուսաստանից, որ իւրեանց բարձի թողի արածների արժողութեան գէթ երրորդ մասը վերադարձնէին իւրեանց»:

«...Նոյն ինքն Լազարեանը ճշտապէս կատարելով Պասկեւիչի հրամանը, չէր աշխատում չողոքորթել հայերին անիրագործելի յոյսերով: Նա ուղիղ ասում էր նոցա, թէ ինչ որ նրանք Պարսկաստանում թողնում են, չեն կարող գտնել Երասխի միւս ափին, թէ ամենամեծ օգնութիւնը, որ կարելի է տալ ամէն մի գերդաստանի 5 արծաթ մանէթից աւելի չի լինել, բայց թէ նոքա կարող են վստահ լինել, որ թէ իրենք եւ թէ իւրեանց սերունդը անդորրութիւն կը վայելեն իւրեանց հաւատակից պետութեան հովանաւորութեան ներքոյ»:

Պետական օժանդակութիւնը, արդարեւ, շրջաբարեց գաղթողների բազմաթիւ կարիքները հոգալու համար: Աւելի եւս դրութիւնը ծանրացաւ, երբ գաղթողները հասան Նախիջեւան եւ զգացուեց հացի մեծ պակասութիւն: Այդ ժամանակ Գնդ. Լազարեանը, չվստահանալով խնդրել Պասկեւիչից նոր դրամական օժանդակութիւն, ինքը փոխարինարար վերցրեց մի Թիֆլիսեցի հայից 2000 ոսկի եւ բաժանեց գաղթականներին: «Բանակ Հայոց գաղթականաց լցաւ առատութեամբ: Պասկեւիչ պսակազարդեաց զայս գործ զովարանութեամբ իւրով[8]»:

1828 թ. մարտ 30ին Լազարեանը վերադառնալով Պասկեւիչի մօտից, հրատարակեց հետեւեալ շրջաբերական նամակը, ուղղուած Արարատեանի հայերին.

«Քրիստոնեայք.

«Լսելի եղեւ յականջս իմ, թէ արք չարամիտք ջանան ո՛չ միայն հրապարակել զստուտ եւ զանպատեհ զրոյցս, այլեւ տալ երկիւղ մեծ որոց կամին անցանել յօրհնեալ

[7] Պատմ., էջ 18—19:

[8] «Նկարագր. գաղթ.», էջ 64:

Ռուսաստան. եւ զայս օրինակ կամին դարձուցանել զձեզ ի զովելի ցանկութենէ սրտի ձերոյ:

«Եւ ես առ ի հերքել զայս ամենայն ըստ պարտեացն՝ որովք բեռնաւորեալ եմ ի Սպարապետէն, եւ ի հաւատարմութենէ ազգին՝ որ առ իս, յայտ առնեմ ձեզ, թէ մեծահոգի Ինքնակալն ամենայն Ռուսաց պարգեւէ պնոցիկ որք ցանկան գաղթել՝ զապահով, զխաղաղ եւ գերջանիկ տեղի ապաստանի ի յընդարձակ Կայսրութեան իւրում:

«Ի գաւառն Երեւանայ՝ Նախիջեւանայ եւ Ղարապաղու, զորս զուք ընտրեսջիք, տացի ձեզ լայնատարած եւ արգաւաւոր երկիր, որ արդէն իսկ ըստ մասին սերմանեալ է. եւ ի պղոյ նորին զտանելորդ մասն միայն տաջիք Տէրութեան. եւ յընթացս վեց ամաց ազատ լինջիք յամենայն հարկատուութենէ. եւ որք միանգամ աւելի ազքատ լցեն ի ձէնջ՝ տացի նոցա օգնութիւն չուելոյ:

«...Ի Ռուսաստան տեսջիք զիմպլատուութիւն ամենայն կրօնից; եւ զհաւասարութիւն իրաւանց Ռուսաց ընդ այլոց հպատակաց Կայսերն. անդ մոռասջիք զամենայն նեղութիւնս զորս կրեցիք. անդ գտջիք զնոր հայրենիք բնակեալ ի քրիստոնէից, եւ ոչ եւս տեսջիք զուրբ կրօնն մեր ի նեղութեան, անդ կեցջիք ընդ հովանաւորութեամբ օրինաց, եւ զպասջիք վաղագոյն զբարերար ազդեցութիւն նոցին. հուսկ ապա անդ վիճակ ձեր բարեգոյն լեցի. եւ փոխանակ սակաւուն զոր կորուսջիք՝ անդ տացի ձեզ հարիւրապատիկ: Ճշմարիտ է՝ թէ թողուք զերկիր ծննդեան ձերոյ, որ սիրելի է ամենեցուն. բայց մտածելն՝ թէ բնակելոց էք ի քրիստոնեայ Տէրութեան, պարտի ազդել ի ձեզ զմեծ ցնծութիւն:

«Քրիստոնեայք ճապաղեալք ի գաւառս Պարսկաց՝ տեսցեն վերջապէս զանձինս ժողովեալ ի մի վայր. եւ գիտէ՞ք արդեօք, թէ բարութիւնք մեծ Ինքնակալին Ռուսաց ո՞րչափ ունի վարձատրել զհաւատարմութիւն ձեր:

«Փութացարո՛ւք, բարեկամք իմ, ժամանակն անգին է. զօրքն մեր ընդ հուպ գտարկեսցեն զգաւառն Պարսկաստանի. յայնժամ զուցէ բազում արգելս դիցեն ձեզ (Պարսիկք), եւ մեք կորուսանիցեմք զմիջոցս պաշտպանելոյ եւ ապահով առնելոյ զգարուստն ձեր. զոհեցէ՛ք զսակաւն եւ ի սակաւ ժամանակի, եւ առատօրէն ընկալջիք զամենայնն եւ ի մշանջենաւորս»:

Պոլկովնիկ եւ Կաւալեր Կայսեր Ռուսաց
Ղազարոս Լազարեանց[9]:

Ի 30 մարտի:

Ի քաղաքս Ուրմի:

Այս շրջաբերական նամակը ունեցաւ բարերար ազդեցութիւն հայ ազգաբնակութեան տրամադրութիւնների վրայ. ամբողջ Արարատեանի հայերը ամէն կողմից, նոյն իսկ հեռաւոր Ղազվին քաղաքից, շտապեցին արձանագրուել ու պատրաստուել գաղթի եւ համախմբուել Երասխի ափին:

Շրջաբերականը, արդարեւ որ կազմուած էր շատ խոհուն կերպով, իրերի իրական վիճակն էր առարկայօրէն ներկայացնում, առանց կեղծիքի, առանց չափազանցութիւնների, առանց մեծամեծ ու սին խոստումների:

Լազարեանը չէր սխալուել նաեւ իր նախատեսութեան մէջ, ասելով, որ Ռուսաստանում «ընդ հովանաւորութեամբ հաստատուն օրինաց զգասցիք վաղագոյն զբարերար ազդեցութիւն նոցին»:

Եւ յիրաւի, հայ ժողովուրդը, երբ ունեցել է հաստատուն օրէնքներ, որոշ իրաւակարգ, երբ բռնազբօսիկ կամայականութիւններն ու ապօրինի կեղեքումներն ու հարածանքները վերացել են նրա կեանքից, նա իր աննման ստեղծագործ կորովով հրաշքներ է գործել:

Իր 4000 տարուայ պատմական կեանքի մէջ նման մշակութային ու քաղաքակրթական «հրաշքներ» բազում անգամներ է ի յայտ բերել:

Եթէ ուզենայինք շեղուել մեր բուն նիւթից, կարող էինք բերել թէ Հայոց պատմութիւնից եւ թէ բոլոր ազգերի կեանքից ցոյց տալու համար, որ մարդկային հասարակութիւնները՝ մեծ հաւաքականութիւններից սկսած մինչեւ փոքրագոյնները, յառաջադիմել են, խոշոր նուաճումներ են կատարել, երբ այդ հասարակութիւնների, այդ հաւաքականութիւնների մէջ իշխել են իրաւունքն եւ օրէնքը, երբ յարգանքն դէպի օրէնքը եղել է կենդանի եւ ո՛չ գատարկ հնչիւն...

Քանի որ 1828 թ. մարտի 9ին ռուսաց զօրաբանակի մեծ մասը, ըստ Թիւրքմէնչայի

[9] Տե՛ս «Նկար. գաղթ.», էջ 77—79:

© National Library of Armenia

հաշտութեան դաշնագրի պիտի թողնէին Ատրպատականը, եւ մեծն մի փոքր մասը՝ զօրավար Պանկրատովի հրամանատարութեան տակ, պիտի մնային Սարմատ-Ուրմիա, մինչեւ պատերազմի տուգանքի վերջնական վճարումը, ուստի Լազարեանը շտապեց շրջելու բոլոր այն վայրերը, ուր դեռ չէր եղել. նա գնաց Մարաղա, Ուրմիայում թողնելով հայազգի ենթագնդապետ Մովսէս Զաքարեան Արղութեան-Երկայնաբազուկին, որպէս շրջանի գաղթականական գործի վարիչ, տալով նրան զրամ եւ անհրաժեշտ հրահանգները:

Մարաղայում էլ հայերը մեծ ուրախութեամբ ընդունեցին Լազարեանին եւ գաղթը սկսուեց մեծ թափով:

Երբ պարսիկները տեսան, որ հայերը խումբ-խումբ լքում են իրենց տուն տեղը եւ գաղթի ճանապարհը բռնում, ամայացնելով իրենց երկիրը, քաջքաշելով երկրի անտեսական կեանքը, աշխատեցին ամէն կերպ արգելք լինել ու կասեցնել գաղթը[10]:

Նրանք ասում էին հայերին, որ Ռուսաստանում ճոռաներ կը դառնան, որ ռուսները նրանց գինուորական ծառայութեան կը պարտադրեն, խոստանում էին մեծամեծ արտօնութիւններ շնորհել, եթէ մնարու լինեն:

Բայց միայն պարսիկները չէին, որ նման ջանքեր էին թափում խանգարել հայերի գաղթը Ռուսաստան, այլ եւ անգլիացիները, այդ յաւիտենական անհաշտ մրցակիցներն ու հակառակորդները ռուսներին Մերձաւոր Արեւելքում:

Լուր էին տարածել, որ Լազարեանը բռնութեամբ է գաղթեցնում հայերին, որ երբ թէ «իրենց ականջներով են լսել. 200 ընտանիքից», որ իրենց բռնութեամբ են տանում...:

Այս սուտ լուրերն ու զրպարտութիւնները հերքելու համար, Լազարեանը հրաւիրեց Ուրմիայ կուսակալ Ասկէրխանին, այնուհետեւ նաեւ անգլիացի Վիլլոկին, ինչպէս եւ մի Ֆրանսիացու՝ ոմն Սէմենոյ ատուգելու, թէ որքա՞ն ճիշտ են այդ լուրերը: Ասկէրխանը ուղարկեց իր օգնուն: Բոլոր հարց ու փորձերին գաղթող հայերը միաձայն պատասխանն էին տալիս, թէ՝

«Մենք գերադասում ենք ռուսաց խոտն ուտել, քան Պարսից հացը»:

Թէեւ երկիրը դեռ ծածկուած էր ձիւնով եւ կենդանիների կերի պակաս էր զգացւում, այնուամենայնիւ գաղթողները սկսեցին համախմբուել Երասխի ափին, քանի դեռ ռուս զօրքը չէր պարպել Ատրպատականը:

Ի հարկէ, անախորժ դէպքեր էլ տեղի ունեցան:

Այսպէս «Տաճիկք — կարգում ենք «Նկարագիր գաղթականութեան Հայոց»ի մէջ — ի գոլորշամբարձ եռացումն անզօր կատարութեան իբեանց՝ ոտքէն զանէին ի վերայ գաղթականաց եւ անդամ անգամ քարաձիգ իսկ լինէին աս նոսա: Սիրաք Հայոց բորբոքեցան ի բարկութիւն արդարութեան, սակայն ատելիճանաւորք ռուսաց բարձին զընդղիմութիւն տաճկաց, զվրէժ գաղթականաց եւ զարիւնհեղութիւն ի ձեռն իմաստուն խրատուց իբեանց» (էջ 41):

Ապրիլի 20ին ռուսաց զօրքը սկսեց քաշուել Ատրպատականից:

Գաղթողները Ուրմիայից, Սարմատից եւ Խոյից շտապեցին հասնել Արաքսի ափը եւ մաս-մաս անցնել գետը:

1828 թ. մարտի 16ին առաջին ամենամեծ կարաւանը ճանապարհ ընկաւ Ատրպատականից՝ Թաւրիզից, Մարաղայից եւ այլ վայրերից: Գարունը սկսուել էր, բնութիւնը փարթամօրէն արթնանում էր ձմեռուայ քնից...

40·000 հայերի անցքը Արաքսից ներկայացնում էր չափազանց սրտառուչ եւ խրատակս յուզիչ տեսարան...

Եւ այս պատկերը յաւերժացրեց կտաւի վրայ ռուս ազգանուանաւոր նկարիչ ակադեմիկոս Մաշկովը, որը Պասկեւիչի հրաւէրով եկել էր ռազմաճակատ, ականատես էր եղել կռիւներին, ականատես եղաւ նաեւ հայերի գաղթին:

Այդ նկարի նկարագրութիւնը տուել է Պատոն:

«Հեռում, — ասում է նա — կտաւի վրայ երեւում են Մասիսը, Երասխը եւ Երեւանը ճանապարհի վերայ ընկած գիւղերը: Պատկերի աջ կողմը ինքը Լազարեանը հրամաններ է տալիս հայ տանուտէրերին եւ ազատներին: Նրան շրջապատել են նրա թիկնապահները, անգլիական եւ պարսկական ներկայացուցիչները, իսկ յետին դէպի վերայ երեւում է գաղթականների ընդարձակ նստուածքը[11]»:

Ա. Երիցեանն էլ խօսելով այդ նկարի մասին հետեւեալ խօսքերով է արտայայտում իր տպաւորութիւնը.

«Գաղթականութիւն 40·000 Հայոց ի Պարսկաստանէ ի Ռուսաստան ընդ կարգադրութեամբ զնդապետի Ղ. Յ. Լազարեանց յամի 1828 նկարը տխուր մտածմանց մէջ է դնում մեզ եւ ակամայ երեւակայել տալիս գաղթականաց կրած թշուառութիւնները դեռ եւս համբորդութեան միջոցին[12]:

*

40·000 հայ գաղթականների մուտքը Հայոց Նահանգը, բնականաբար, էր կարող առանց դժուարութիւնների, առանց մեծ տառապանքների ու նոյն իսկ կեանքի կորուստների անցնել...: Եւ արդարեւ, ամենից առաջ զգացուեց հացի պակասութիւն, որից շատ տառապեցին գաղթականները: Լազարեանը, որ դեռ Խոյումն էր, լուր առնելով նոր եկողների ծանր վիճակի մասին, շտապեց Նախիջեւան (մայիս 19ին) ուր գլխաւորապէս կուտակուել էին գաղթականները: Թէեւ նա պաշտօնապէս Երասխի այս ափում անելիք չունէր, այսու հանդերձ նրա վեհանձն սիրտն ու հայրենասիրական զգացումները չհանդուրժեցին եւ նա գաղթականների վիճակը թեթեւացնելու նպատակով մի Թիֆլիսցի հայից իր պատասխանատուութեամբ փոխարինաբար վերցրեց 2000 ոսկի եւ բաժանեց գաղթականների մէջ:

Այնուհետեւ Պասկեւիչի կարգադրութեամբ դիմեց Երեւանի ժամանակաւոր կառավարութեան, որի անդամներից մէկը Ներսէս արքեպիսկոպոսն էր, եւ խնդրեց շուտափոյթ օգնութիւն հասցնել:

1828 թ. փետրուար 26ին Պասկեւիչի Լազարեանին տուած հրահանգների մէջ արդէն տրուած էին ուշադրաւ ցուցմունքներ գաղթականներին տեղաւորելու պայմանների մասին:

Գաղթականները պիտի բնակութիւն հաստատէին ամրողջ գիւղերով. լեռնային տեղերի բնակիչները պիտի տեղաւորուէին լեռնային շրջաններում, իսկ դաշտայինները՝ դաշտավայրերում. չպիտի բնակեցուին կարուտատէրերի հողերում, այլ արքունի եւ դատ հողամասերում. եթէ արքունի հողերի պակաս եղաւ, թոյլատրւում էր բնակութիւն հաստատել վանքապատկան կալուածներում,

---

[10] Մօտաւոր հաշուով համարում են, որ Պարսկաստանը հայերի գաղթով զրաստուել է տարեկան 32 միլիոն ռուբլու չափ:

«Նկար գաղթ.» Անյայտ հեղինակը, ի մէջի այլոց այդ առթիւ գրում է. «Թէպէտ եւ նեղէին Հայք ի Պարսկաստան, սակայն փութաջան աշխատասիրութեամբ իբեանց եւ վաճառականութեամբ տային Պարսկաստանի եկամուտ ամի ամի զ100·000 թուման, կամ 1·600·000 ռուբլի թուղթ զրամս, զարմէ վկայեաց հրամանատարն Զրիբխանով ի յայտարարութեան իւրում առ Զենեռալ վիցէ կանցլերն զրաֆ Նեսէլրոան»: էջ 67, ծանօթ.:

[11] Տե՛ս Պատոն, էջ 21:

[12] Երիցեան, «Կովկասահայք», Հ. Ա., էջ 332:



Գաղթականութիւն 40000 Հայոց Պարսկաստանէ Ռուսաստան 1828ին

© National Library of Armenia

քրիստոնեաների նոր գիւղերը չպիտի խառն լինէին մահմեդական բնակիչների հետ եւ այլն:

Այժմ Պասկեւիչը եւս տեղեկանալով գաղթականների ծանր կացութեան մասին, հրամայեց ցրուել գաղթականներին Արարատեան աշխարհի այն վայրերը, ուր հացի պակասութիւն չկար, այն է՝ Երեւանի գաւառներն ու Ղարաբաղ:

Լազարեանը մայիս 22ին Նախիջեւանից վերադառնում է Խոյ, ուր դեռ չմեկնած հայ գաղթականներ կային: Նրանց փոխադրութեան գործը յանձնարարից զօրապետ Արզութեան-Երկայնաբազուկին, իսկ ինքը մեկնեց Ղարսի կողմերը, միանալու ռուս զօրքին, որ պատրաստւում էր Ղարսը գրաւելու: Յունիս 29ին տեղ հասնելով, համառօտ կերպով զեկոյցեց Պասկեւիչին գաղթականութեան փոխադրութեան ու վիճակի մասին:

Այսպէս, 3½ ամսուայ ընթացքում՝ 1828 փետրուար 26ից մինչեւ յունիս 11ը, Լազարեանին յաջողուել էր փոխադրել Պարսկաստանի հայերից երեսնց հայրենի երկիրը՝ 8249 ընտանիք[13]:

*

Այս հազարաւոր հայերի գաղթականութեան պատմութիւնը թէեւ մեր բուն նիւթից դուրս է եւ մենք կանգ առանք այն չափով, որքան որ պէտք էր ներկայացնելու Գնդ. Ղ. Լազարեանի դերը այդ բարդ գործում, այսու հանդերձ հարկ ենք համարում մի քանի կարեւոր լրացուցիչ տեղեկութիւններ եւս տալ եւ ապա անցնել այն տխուր վախճանին, որը վիճակուեց Գնդ. Լազարեանին այնքա՛ն փայլուն գործունէութիւնից յետոյ...:

Կեանքը երօք որ մի առեղծուած է...: Յաճախ ամենատաքինի մարդիկ զոհ են գնում սեւ ապերախտութեան, իշխանաւորների անձնական կրքերից բխած...

Այդպիսի տխուր ճակատագիր ունեցաւ եւ գնդ. Ղ. Լազարեանը...:

*

Ա. Երիցեանի վկայութեամբ գաղթականները ունեցել են մեծ թուով մեռոնդներ. այդ երեւում է, — ասում է նա — այն պաշտօնական մարդահամարից, որը երկու տարի անց, այն է՝ 1831 թ. կատարուել է տէրութեան կողմից:

Ըստ այդ մարդահամարի գաղթած 8249 անձից մնացել էր՝ 6946 տուն, պակասել էր 1303 գերդաստան... 40·000ից կամ փոքր ինչ աւել հոգուց մնացել էին՝ 35·000 հոգի...:

Այդ մարդահամարից երեւում է նաեւ, որ պարսկահայ գաղթականները տեղաւորուել էին Հայոց Նահանգում հետեւեալ կերպով՝

Երեւան քաղաք՝	366	ընտանիք կամ	1·715	հոգի
Երեւանի մահալներում՝	4·193	„ „	21·853	„
Նախիջեւան քաղաք՝	265	„ „	1·110	„
Նախիջեւանի մահալներում՝	1·872	„ „	9·542	„
Օրդուբաթ քաղաք՝	36	„ „	182	„
Օրդուբաթի շրջակայքում՝	214	„ „	1·158	„
Ամէնքը՝	6·946	ընտանիք կամ	35·560	հոգի

Բացի այդ՝ մի քանի հարիւր գերդաստաններ անցել էին Ղարաբաղ, իսկ ոմանք էլ ցրուել հասել էին մինչեւ Թիֆլիս[14]:

Լէօն համարում է, որ 1826—1828 եւ 1829 թթ. յետոյ, պարսկահայ եւ տաճկահայ գաղթերից յետոյ, Երեւանի եւ Նախիջեւանի խանութիւնների մէջ բնակութիւն էին հաստատել՝ 57·226 հոգի[15]. արդ, եթէ ի նկատի առնելու լինենք, որ 100·000 տաճկահայ գաղթականների մեծ մասը տեղաւորուել էին Թիֆլիսի Նահանգում՝ Ախալցխա, Ախալքալաք քաղաքներում եւ շրջակայ գիւղերում, պիտի համարել, որ տրուած թիւը՝ 57·226ը՝ ընդհանուր առմամբ համապատասխանում է Երիցեանի գրած տեղեկութիւններին:

Այդ նոր գաղթած հայերը ամենուրեք անմիջապէս լծուեցին շինարար աշխատանքների, բայց, դժբախտաբար, ո՛չ ամենուրեք հանդիպեցին համակրանքի եւ ստացան անհրաժեշտ օժանդակութիւն...:

Ցարական ռեժիմի ներկայացուցիչները շատ վաղ սկսեցին ցոյց տալ իրենց դէպի հայերը ունեցած նախապաշարումների արտայայտութիւնները...:

Այսպէս, Ա. Երիցեանը բերում է երկու ռուս հեղինակաւոր անձանց հետեւեալ վկայութիւնները այդ մասին.

«Ռուս ասիճանաւոր Զուբարէվը, որ պաշտօնով ուղարկուած էր Ղարաբաղ, 1830 թուի ապրիլ 20ին գրում է Պասկեւիչին՝ «Անցեալ պարսկական պատերազմի անմահ քաջագործութեանց կարգում անշուշտ շատ նշանաւոր տեղ է բռնում Հայոց Պարսկաստանից մեր երկիր գաղթելը: Հայք մի ժողովուրդ են, որ այս երկրում ամենից շատ են հաւատարիմ մեր տէրութեանը եւ, կարելի է ասել, նոքա ամենատգնեն են զոնէ հասարակ ժողովուրդի մէջ: Պարսկաստանից գաղթած հայք նշանաւոր են օրինակելի աշխատասիրութեամբ. նոցա մեծ մասը արհեստաւոր են, շատ օգտակար եւ շատ հազուագիւտ կովկասում: Դժբախտաբար, այս օգտակար ժողովուրդը չափից դուրս ճնշւում է Ղարաբաղում: Մի կողմ թողնելով ընդհ. հայերին, որոնք կեղեքւում են թուրք բէկերից, կը յիշեմ միայն գաղթականների մասին: Ղարաբաղի տեղական (ռուս) իշխանութիւնը Հայոց դէմ մի ինչ որ նախապաշարմունք ունենալով, աններելի կերպով նեղացնում է նոցա եւ մինչեւ հիմա նոքա չունին հաստատ բնակութիւն: Նոցա տուել են շատ անբերրի հողեր, իսկ Մեղրի Գեուղէյի մահալում տուած հողերն էլ շատ քիչ են...»:

Այնուհետեւ նոյն ասիճանաւորը նկարագրում է Ղարաբաղի գաղթականների վիճակը շատ մռայլ գոյներով...:

Նոյնպիսի տխուր տպաւորութիւններ էր ստացել ռուս հռչակաւոր գրող Գրիբոյեդովը, որը լիազօր դեսպանի պաշտօնով 1828 թ. սեպտեմբերին Թեհրան էր գնում:

Գաղթականների թշուառութիւնն եւ ռուս պաշտօնեաների անընդունակութիւնները ու դեղծումները իր աչքերով տեսնելով, նա գրել էր Պասկեւիչին եւ խնդրել՝ «Գոնէ Թիֆլիսի Հայոց (Ներսիսեան) ուսումնարանի աշակերտներից մի քանի պաշտօնեայ ուղարկէ այդ կողմերը...»:

Բայց դժբախտութիւնը նրանումն էր, որ հէնց ինքը Պասկեւիչը պատկանում էր այն ռուս ասիճանաւորների շարքին, որոնք ցարական ռեժիմի օրով այնքա՛ն տոգորուած էին մեծ նախապաշարումներով հայերի հանդէպ:

Պասկեւիչը վաղուց արդէն սրել էր իր ատամները Ներսէս Աշտարակեցու դէմ, մոռանալով նրա անդնահատելի ծառայութիւնները, մատուցած ռուս-պարսկական պատերազմի ժամանակ ռուս զօրքին եւ հէնց իր՝ Պասկեւիչի յաջողութիւններին:

Կուրացած իր անձնական թշնամութիւնից զօրավար Կրասովսկու դէմ, որի հետ Ներսէսը սերտ բարեկամութիւն ունէր, Պասկեւիչը նախ փորձեց լարել Ներսէսին Կրասովսկու դէմ, բայց վրիպեց. Ներսէսը մնաց հաւատարիմ Հայոց Նահանգի առաջին զինուորական Նահանգապետին եւ էջմիածնի աղատարարին, որ թողել էր բոլոր հայերի սրտերում ամենալաւ յիշողութիւններ:

Պասկեւիչը, վրիպելով իր սադրանքների մէջ Ներսէսի հանդէպ, երբ իմացաւ, որ գնդ. Լազարեանը բարեկամական նամակագրութիւն ունի Հայոց մեծ հոգեւորականի հետ, որոշեց վրէժխնդիր լինել նաեւ Լազարեանից...:

Եւ այս երեք անմահ գործիչները հերթով զոհ գնացին Պասկեւիչի ոխակալութեան... նա բազում զրպարտութիւններով կարողացաւ գրգռել կառավարական բարձր շրջաններին Կրասովսկուն յետ կանչել Պետերբուրգ, իսկ Ներսէսին ուղարկել աքսոր Գիլանեւ, որպէս Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ...:

Բայց Պասկեւիչը իր կոպիտ հարձակումների մէջ կանգ չառաւ իր այնքա՛ն հաւատարիմ գործակիցների դէմ. նրա անոսի փառասիրութիւնն ու կրքոտութիւնը այնքան կուրացրին նրան, որ նա շատ հեռուները գնաց եւ մինչեւ իսկ փորձեց արատաւորել պարսկահայ գաղթականներին, չպրտելով նրանց երեսին որքան անհիմն, նոյնքան եւ սուտ մեղադրանքներ, իբր թէ հայերը գաղթել են Ռուսաստան ռուսական ոսկուց շլացած...:

Բարեբախտաբար, պատմութիւնը պահպանել է այն գրութիւնը, որ գնդ. Ղ. Լազարեանը ուղղել էր Պասկեւիչին եւ արիարար յետ մղել կոմսի այդ հրէշային զրպարտութիւնը:

Այդ գրութեան մէջ, ի միջի այլոց ասուած էր.

«Հայք ռուսաց ոսկու համար չեն գաղթում, այլ նոքա զոհում են իրենց բոլոր ունեցուածքը, եւ այն կարծիքը, որ ունիք դուք նոցա մասին, նոցա չի կարող վերաբերուիլ...»:

«...Վստահանում եմ ասել, որ դուք լցնելով ձեր ձեռք բերած երկիրները այնպիսի մի վանառաշտ եւ աշխատասէր ժողովուրդով, տէրութեան համար այնպիսի մի մեծ աղբիւր բաց արիք, եւ որքան մեծ ծախք

[13] Տե՛ս «Նկարագր. Գաղթ.», էջ 94:

[14] Երիցեան, «Կովկասահայք», հ. Ա., էջ 335—337:

[15] Լէօ, «Երեւ. թեմ. զպրոցի պատմ.», էջ 113—114:

© National Library of Armenia

եւս արած լինէր կառավարութիւնը գաղթականների վերայ, ինքը ամենորդով շահուած է [16]»:

Ակներեւ է, որ Պասկեւիչը չպիտի մարսէր Լազարեանի այդ արի երդիքը:

Եւ չմարսեց. Պետերբուրգ յղած իր զեկոյցները, լցուած զրպարտութիւններով եւ մի քանի տասը դաւադիրների՝ հայ, ռուս ու վրացի, վկայութիւններով ամրապնդուած, ունեցան իրենց տխուր հետեւանքը Լազարեանի համար...:

Դաւադիրները իրենց ամբաստանութիւնների մէջ ասել էին, որ պարսկահայերի դաղթի կազմակերպութիւնն ու յաջողութիւնը Լազարեանը միայն իրեն է վերագրել, մինչդեռ նրա դերը եղել է շատ չնչին, որ նա Ներսէս Աշտարակեցու հետ միշտ նամակագրութիւն է ունեցել եւ նրա մօտիկ բարեկամն է եւ այլն, եւ այլն:

1829 թ. զնդապետ Ղազար Լազարեանը խիստ հրաման է ստանում վերադառնալ Պետերբուրգ...

Պետերբուրգ հասնելով, Լազարեանցը անմիջապէս հրաժարւում է պետական ծառայութիւնից...:

Այնուհետեւ այլեւս տեղեկութիւն չկայ նրա մեռցորդ կեանքի ու մահուան մասին...:

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ԼԱԶԱՐԵԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բարեգործութիւնը՝ Լազարեան հոյակապ տոհմի բոլոր անդամների մեծագոյն առաքինութիւններից մէկն է եղել: Բարեգործութիւնը կազմել է նրանց ազնիւ հոգու ու լայն սրտի բնական պահանջը: Եւ որ ուշագրաւն է, նրանք իրենց բարի գործերը կատարել են առանց ազմուկի, համեստօրէն եւ առանց ապասելու բարոյական փոխհատուցումի:

Առատ ձեռքով նրանք օգնութեան են հասել բոլոր կարիքաւորներին՝ անհատ թէ հասարակական հիմնարկ, առանց խտրութիւն դնելու նրանց մէջ՝ ցեղային թէ կրօնական: Ընդառաջել են թէ իրենց հայրենակիցների՝ նիւթական, կրօնական, կրթական, առողջապահական կարիքներին եւ թէ իրենց նոր հայրենիքին՝ ռուս ժողովրդին եւ հասարակութեան:

[16] Տե՛ս Պատմ., «Վերածնութիւն», էջ 21. Ընդգծումները մերն են:

Անհնարին է թուել մի առ մի նրանց արած նուիրատուութիւնները. յայտնի է միայն որ բարեգործական նպատակով արուած յատկացումները կազմում են մի շատ խոշոր գումար՝ աւելի քան երկու միլիոն ռուբլի, չհաշուած Լազարեան ճեմարանին, նրա ապարանին, հինգ հայ եկեղեցիներին արուած նուիրատուութիւնները:

Պրոֆ. Զինովիեւը, անդրադառնալով այս խնդրին, տալիս է հետեւեալ թանկագին տեղեկութիւնները.

«Կէս դարուց աւելի է, ինչ ներկայ Հոզարարծուի (այսինքն՝ Խաչատուր Յովակիմեան Լազարեանի: Յ. Թ.) Նախահայրերը, ազգականները անընդհատ նուիրարերել են խոշոր գրամագլուխներ քրիստոնէական դանդաղ դաւանանքների եկեղեցիների կառուցման համար, ապահովելով մշտական եկամուտներով նրանց գոյութիւնը՝ տոկոսներով անձեռնմխելի գումարներից կամ թէ տներից ու զանազան շէնքերից ստացուելիք եկամուտներով: Նուիրատուներն էին՝ զեղապետ Ղազար Նազարեան Լազարեանը, որա չորս զաւակները՝ Յովհաննէս, Խաչատուր, Մինաս եւ Յովակիմ, ապա Յովակիմի զաւակները՝ Յովհաննէս, Խաչատուր, Յարութիւն եւ Ղազար իրենց ընտանիքներով: Կէս դարուայ ընթացքում նրանք նուիրարերել են զանազան բարեգործական նպատակների համար շուրջ երկու միլիոն արծաթ ռուբլի (կամ շուրջ 6 միլիոն ռուբլի թղթադրամ):

2. «Կառուցել են երկու մայրաքաղաքներում հինգ հայկական քարաշէն եկեղեցիներ իրենց կից շէնքերով, որոնք բերում են մշտական եկամուտ:

3. «Զանազան քաղաքներում եւ գիւղերում՝ Մոսկուայի, Տուլայի Պերմ եւ միւս նահանգներներում, կառուցել են 20ից ո՛չ պակաս քարաշէն եկեղեցիներ, իրենց կից տներով ու բնակարաններով քահանաների եւ միւս եկեղեցական պաշտօնեաների համար:

4. «Պերմ Նահանգում, իրենց կալուածներում, գործարաններում եւ գիւղերում Լազարեանները բաց են արել բազմաթիւ դպրոցներ, որոնցից մի քանիսներում կիրառուել են Լանկասթերի մեթոդը: Կառուցուել են՝ հիւանդանոցներ, դեղատներ, ծերունիների համար ապաստաններ, որբանոցներ, ապահովելով երեխաների ապրուստը:

«Բացի այս ամէնը միշտ նուիրարերում էին գումարներ յօգուտ դպրոցների, ապաստանների ինչպէս երկու մայրաքաղաքներում, այնպէս էլ կայսրութեան միւս քաղաքներում:

«Նման բարեգործական ձեռնարկներից դուրս նրանք իրենց հաշուով ապագրում էին զանազան գրքեր ու ձրի բաժանում:

«Այսպէս, օրինակ, Նիկոլայ Ա. կայսեր կեանքի վերջին ժամերի նկարագրութիւնը Խաչատուր Յովակիմեան Լազարեանը թարգմանել է տալիս Հայերէնի եւ Վրացերէնի, իր հաշուով լոյս ընծայում եւ ապա գրքի սպառումից զոյացած ամբողջ հասոյթը նուիրում յօգուտ Սեւաստապոլի պատերազմի ժամանակ սպանուած ու վիրաւոր զինուորների ընտանիքների»:

Այս տեղեկութիւնները հաղորդելուց յետոյ Պրոֆ. Զինովիեւը հետեւեալ ընդհանուր եզրակացութիւնն է հանում.

«Այս բոլոր նուիրատուութիւնները բարեգործական նպատակներով ի մի ճուլելով, կարելի է երեւակայել թէ ինչպիսի՛ բարիքներ եւ օգուտներ են տուել Լազարեանները Կառավարութեան եւ Հայ ազգին: Այս առաքինի սխրագործութիւնները մասնաւորապէս կարեւոր են նոր սերունդի կրթութեան ու դաստիարակութեան տեսակէտից, քանի որ շատերը իրենց չքաւորութեան հետեւանքով եւ այնպիսի վայրերում, ուր չկան դպրոցներ, հնարաւորութիւն են ստացել կրթութիւն ձեռք բերել: Միակ արդարամիտ տուրքը այդ բարերարութիւնների համար՝ անսահման, աղնիւ երախտագիտութիւնն է մարդկանց սրտերում [1]»:

Լազարեանների առատաձեռնութիւնը չի սահմանափակուել Ռուսաստանով՝ հայ եւ ռուս ժողովուրդների կարիքներին ընդառաջելով: Նրանք չեն մոռացել ո՛չ իրենց ծննդավայրը՝ Ն. Զուղան եւ ո՛չ էլ իրենց հայրենակիցներին Հնդկաստանում:

...Տոհմի վեհագնեայ Լազարեանց, — պատմում է Յարութիւն Տէր-Յովհաննէսը — պահէին զթղթակցութիւն ընդ հայրենակից համազգիսն Խրիմեանց որք ի Պարս եւ ի Հնդիկս. այլ մինչ ի կենաց աշխարհի ի յաւիտենականն փոխեցան կանոս վեհագնեայ սերունդքն Լազարեան որք ի Զուղայ տեսին զարեւ եւ չնչեցին զկենսական զօդ, բարեշուք որդիք նոցա, ծնեալքն ի Ռուսաստան ոչ եւս զարձուցին զքաղցր մտադրութիւն Խրիմեանց ի Զուղայ: Այլ արհին Թադէոս առաջնորդն Զուղայու խելահաս գոլով թէ քանի օգտակար է զարձուցանէն նոցին վեհանութեանց Տեարցն Լազարեանց զուշադրութիւն Խրիմեանց ի Զուղայ ի հոգս հայրենեաց Խրիմեանց, սկսեալ ի 1852 տարւոյ սկիզբն տարբ զթղթակցութեանն ընթացս շարունակելոյ ընդ նոցին վեհանութեանցն, կարեւոր խնդրանօք ազգային իրողութեանց, յորմէ զարթուցեալ նոցին վեհանութեանցն առատաշնորհ հայրենասիրութիւն, բազդաւոր արարին զԶուղայ արժանի համարելով զնա Խրիմեանց մատադրութեանց. եւ յամի 1853 առաքեցին զմասնաւոր դրամական նպաստս վասն Ամենափրկչի վանաց եւ վասն կուսանաց Անապատի. եւ յամի 1855 եւ 1857 առաքեցին զթանկագին եկեղեցական զգեստս բաւական ծախիւք պատրաստեալ տալով յիշատակ Ամենափրկիչ Վանին, ըստ այնմ մասին յարգելով զինղիր Սրբազան Թադէոս արքեպիսկոպոս Առաջնորդին Զուղայու [2]»:

Մի այլ տեղում նոյն հեղինակը հաղորդում է.

«Աղայ Յովհաննէս Լազարեան ի գրութեանն Խրիմ յամի 1793 յ3 նոյեմբերի յիշատակէ, «Մեր Դաշտի [3] Թարվիզեցեաց եկեղեցոյն էլ՝ գրած եմ պարոն Խաչիկ Արզարեանին որ նուէրք հասուցանի»:

Միեւնոյն նամակի, մէջ Յովհաննէս Լազարեանցը գրում է.

«Անցեալ տարի գրեալ էի Հաշտարխան Պարոն Մկրտում Գալստանովին, որ նա երկու հարիւր բուպլի հասուցանէ ձեզ... եւ վասն ապագային եւս խոստանամ որքան կենդանի եմ մնալոց, սկսեալ այս առաջիկայ տարիս 1794 թուէն՝ ամէն տարի 10 թուման տերես հասարակ փող նուէրք մատուցանել սուրբ Ամենափրկիչ վանքիդ եւ մասն ինչ կուսանաց վանքին՝ եւ Թավրիզեցւոց մահլաթի եկեղեցւոյն, եւ քանի եկեղեցի որ կայ Զուզայ այժմուս չէն եւ ի պաշտօնի, խնդրեմ այն եկեղեցեաց որքանութիւնն եւ անուանքն գրէք ինձ, որ նոցա եւս յիշէք մատուցանեմ: Եւ երբ որ ընծայս ստանայք խնդրեմ կարգ դնէք ի մէջ վանքին, որ ամենայն տարի յունվարի 12 յատուկ պատարագ մատուցանէք վասն իմ ծնողացս, եւ վասն իմ միայնակ որդի

[1] Տե՛ս Պրոֆ. Զինովիւ, «Պատմական ուրուագիծ Լազարեան ճեմարանի» եւ այլն, էջ 89—90:

[2] Տե՛ս հեղինակի «Պատմ. Նոր Զուղայու» եւ այլն, էջ 105—106. ընդգծումները մերն են: Յ. Թ.:

[3] «Դաշտ» կոչւում էր Ն. Զուղայի այն թաղամասը, ուր գտնւում էր Ազազարեանցի կամ Նազարէթեանցի տունը, ուր ապրել է Խօջա Մանուկի Թոռը՝ Նազարէթը, Լազարեանցի նախահայրը:

© National Library of Armenia

Յարութիւնին, որ թիվն 1791 յունվարի 12 վախճանեցաւ, եւ յետ սուրբ պատարագին հասարակութեամբ պաշտօն կատարէք[4]»:

Այս նամակին պատասխանում են Ն. Զուղայի Ամենափրկիչ վանքի հոգաբարձութիւնն եւ երկու վարդապետներ 1795 թ. օգոստոս 20ին: Յայտնելով իրենց ցաւակցութիւնը աղա Յովհաննէսի որդու վաղահաս մահուան առթիւ, գրում են, որ բոլոր եկեղեցիներում անմիջապէս կատարուել է Ս. Պատարագ եւ աղա հոգեհանգիստ: Ի վերջոյ յոյս են յայտնում, որ նա օգնութեան կը դայ Ամենափրկիչ վանքին:

Իրօք զարմանալի մարդ է եղել աղա Յովհաննէս Լազարեանցը իր բազմակողմանի հետաքրքրութեամբ, չնայած իր բազում զբաղմունքներին, որոնք կապուած էին նրա բարձր դիրքի եւ պաշտօնների հետ: Նոյն նամակում նա հարցնում է.

«...1743ումն ես Զուղուց վերկարման՝ Տէր Գէորգ քահանայ կայր միականի. կենդանի է այժմ թէ վախճանեալ է, եւ զաւակ է մնացեալ աշխարհական են թէ Քահանայ են՝ խնդրեմ մեզ ծանուցանել»:

Նոր Զուղայի պատմիչը հաղորդում է նաեւ մի ուրիշ փաստ: Խօսելով Ն. Զուղայի Սուրբ Կատարինէ Անապատ Կուսանոցի մասին, գրում է.

«Ըստ արձանագրութեանն եղելոյ ի սմին Կուսաստանի, շինեցաւ այս Անապատ ի Թուականին Հայոց ՌՀԲ (1623), արդեամբ եւ ծախիւք բարեպաշտօն Խօջայ Եղիազարու, որ էր պապ իշխանապետին Եղիազարու Նահապետին տոհմի վեհաղնեայ Լազարեանց»:

Ծանօթութիւնից էլ իմանում ենք, որ կուսանոցում պահւում է «Գալարածոյ Թուղթ» արձանագրութեամբ Անապատի կառուցման մասին, եւ որ այդ թղթի մէջ ասուած է, ի միջի այլոց, որ՝

«Զարդարեալ է ջահիւք եւ լապտերօք արար տեղի պատարագի եւ փառարանութեան անմահ թագաւորին Քրիստոսի...[5]»:

Ու նաեւ՝

«...Լինելն սոյն խօջայ Եղիազարու պապ իշխանապետին Եղիազարու ասի լինի յայտ, զի ի նմին արձանագրութեան յետ եկեղեցոյ շինութեանն յայտնելոյ՝ յիշատակի «Ասուած օրհնէ նախ զխօջայ Եղիազարն որ շինեաց զեկեղեցին խըցերով եւ տնտես տներովն եւ ետ եկեղեցւոյն մէկ խաչ, մէկ Աւետարան, մէկ այսմաւուրք, մէկ սկիհ, մէկ շուրջառ, մէկ սաղաւարդ, մէկ աւազանի ծածկոց, երկու մոմդան, մէկ սկոհ աղլուխ[6]»:

Ն. Զուղայի յիշեալ պատմիչը այնուհետեւ առաջ է բերում Ն. Զուղայի եկեղեցիներում պահպանուած «Յիշատակարան»ներից հետեւեալ տեղեկութիւնները Լազարեանների կողմից արուած նուիրատուութիւնների մասին.

ա. Սուրբ Լուսաւորիչ կամ Սուրբ Մինաս եկեղեցւոյ Յիշատակարանում ասուած է.

«Ասուած օրհնէ զխօջայ Մանուկն՝ զկողակից Մարիամն եւ զորդին Եղիազարն, որ եառն ի դուռն սուրբ եկեղեցւոյն (Թաղին Դաւրիժեցւոց) մէկ կոստղած ոսկեռուփ մագաղաթ Աւետարան, Ա. ատենի սաղմոսարան, Ա. Ժամագիրք, Ա. տօնացոյց, Ա. աւազանի վարագոյր իւր շամփրոնն, մէկ մեծ մոմդան, մէկ զալամքար վարագոյր, Ա. շուրջառ, եւ զխորանն մեծացոյց եւ բարձրացոյց եւ նորոգեաց յիշատակ իւրն եւ իւր ծնողացն Ղազարին եւ Խաթէին յիշեցէք եւ Ասուած ողորմի ասացէք»:

բ. Սուրբ Լուսաւորչի Եկեղեցւոյ Յիշատակարանում ասուած է.

«Ասուած օրհնէ Պարոն Աղազարն կողակիցն Բաղրին եւ զՎարդենին, եւ զորդին Մանուկն եւ զՍաֆարն, որ եառ եկեղեցւոյն (սուրբ Լուսաւորչի) Ա. մեծ զիւանի խալի, Ա. բանաֆլ ատլաս նաչի (դաղաղի) ծածկոց, Բ. պղընձէ պատկեր, Ա. չէթ սուղանի»:

գ. Յիշատակագիր ի կուսանաց Անապատի.

«Ասուած օրհնէ զԽօջայ Եղիազարն... եւ զիւր որդի Նազարէթն անփորձ պահէ»:

դ. Արձանագիր ի սուրբ Լուսաւորիչ (սուրբ Մինաս) Եկեղեցւոջ.

«Յիշեցէք ի Քրիստոս զԽօջայ Աղազարն եւ զծնողսն Մանուկն եւ զՄարիամն եւ հանգուցեալ որդին Վալիդէն, եւ նորաբողբոջ Մանուկն եւ զկենակից Բատունն որ եառուն զսուրբ Կաթուղիկէն ծածկել, յիշեցէք առ Ասուած»:

ե. Յիշատակագիր սուրբ Լուսաւորչի Եկեղեցւոյ.

«Ասուած օրհնէ զՊարոն Աղազարն եւ իւր կողակիցն Բաղրին եւ որդիքն Աղայ Մանուկն, Աղայ Սաֆարն որ եառուն յիշատակ սուրբ Լուսաւորչի Եկեղեցւոյն Ա. զառ թիրվանդեայ շուրջառ, Ա. սաղաւարդ իւր խաչովն, Ա. քաշած զառ ուրար, Ա. ջուղտ զառ բաղրանդ (թեւնոց), Ա. չապիկ, Ա. սկհւոյ զառ աղլուխ, սուրբ Լուսաւորչի Եկեղեցւոյ միջի մահաջարն քաշեց, վերնատունն շինեց...»:

*

Վերոյիշեալ տեղեկութիւնները այնքա՞ն խօսուն են ու այնքա՞ն ցայտուն ապացոյցներ Լազարեան տոհմի բոլոր անդամների առաքինութեանց, սկսած իրենց նախահայրերից մինչեւ տոհմի վերջին շառաւիղը՝ Մանուկն Յովհաննէս Խաչատրեան Լազարեանը, որ որ եւ է մեկնաբանութեանց ու լուսաբանութեանց կարիքը չկայ:

Եթէ մեր այսօրուայ բազմաթիւ հայ հարուստները, միլիոնատէրերը, սկսած Կալիֆորնիայի 15 հայ միլիոնատէրերից մինչեւ Լոնդոն–Փարիզում բազմած նաւթի թագաւոր Կիւլպէնկեանը հետեւէին Լազարեանների օրինակին, հայ գաղթաշխարհում մենք չէինք ունենայ կարիքաւորներ եւ հայ գաղթաշխարհը սփռուած կը լինէր դպրոցներով. գրադարաններով, հիւանդանոցներով, մեր գրականութիւնը ու գրագէտները չէին զտնուի այն ողորմելի վիճակում, որի մէջ այսօր նրանք հոգեպէս եւ բարոյապէս ատառապում են...:

(Շարունակելի:)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

(Շարունակութիւն:)

ԲԵՐԱ

1. ՀԱՄԱԶԳԵԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1846)

1846 Մարտ 17ին Բերայի մէջ դումարած իր առաջին ժողովին առթիւ Համազգեայ Ընկերութիւնը 76 ստորագրութեամբ գրաբար յայտարարութիւն մը հրատարակելով՝ կ'ըսէ. «Մեծաց արդարեւ գովութեանց է արժանաւոր եւ առիթ անչափ խնդութեան, տեսանել արծարծեալ ի սակաւ յայտոսիկ ամս ի սիրտ ամենայն ազգայնոց մերոց, փոյթ ի մեր եռանդեան ի կանգնումն ուսումնարանաց, եւ ի զարգացումն ուսումնական ընկերութեանց ... ազգ մեր նախնագոյն յաղագս, իբր անյիշատակ թաղեալ երբեմն ի տգիտութեան խորս ... արդ զգլուխ ի վեր ամբարձեալ յաւերակաց շիրմացն, թախիծ մեզ արկանէ որդւոց իւրոց, մի՛ զանց առնել զիւիք ի կենդանացուցանել զնա յիմաստութիւն... Մի ազգեմք եւ ի մի միաբանութիւն ժողովեալ, երթիցուք ուր ձգիցէ զմեզ ճշմարիտ ազգասիրութիւն[1]»:

Այս յառաջաբանէն վերջ՝ Ընկերութեան հիմնադիրները կը ներկայացնեն 10 էջտեր, որոնք իրենց գործունէութեան ապագայ ասպարէզը պիտի կազմեն: Այդ էջտերն են.

«Ա. Միասիրտ, միակամ, խաղաղասէր շաղկապումն անձանց ի մի միաբանութիւն:

Բ. Յօրինուած եւ թարգմանութիւն գրեանց օգտակարաց, եւ հրատարակումն այնոցիկ ապագրութեամբ:

Գ. Կանգնումն վարժարանաց եւ դպրոցաց ի քաղաքս եւ ի գիւղս՝ ի դաստիարակութիւն ուստերաց եւ դստերաց:

Դ. Հմտութիւն եւ գործադրութիւն արուեստին երկրագործութեան:

Ե. Հեռախոյզ քննութիւն հայրենականացն նուիրեանց եւ սովորութեանց:

Զ. Հաւաքումն մատենից նախնեաց եւ զրամոց եւ այլոց նշխարաց հնութեանց:

Է. Հաւաքումն նիւթոց բնական պատմութեան կենդանեաց, բուսականաց եւ ընդերկրեայց:

Ը. Ուսումն ամենազգի արուեստից ծաղկելոցն ազանց:

Թ. Բարգաւաճումն վաճառականութեան ըստ եւրոպական օրինի:

Ժ. Ուսումն անթերի դիտութեան վաստակելոյ ի մեստաղս[2]»:

Ընկերութիւնը իր անմիջական գործունէութեան նպատակ կ'ընտրէ սակայն հետեւեալները. 1. Թարգմանել կամ շարադրել կարեւոր հատուածներ՝ մտքի զարգացումի համար. 2. Ջանք ընել՝ հաստատուն վաճառականութեան մը հիմ դնելու. 3. պատրաստութիւն տեսնել՝ մանչերու եւ աղջիկներու վարժարաններ հիմնելու համար[3]:

Ընկերութեան առաջին գործը կ'ըլլայ կազմել իր յատուկ Կանոնագիրը: Այս կարեւոր գործը, ընկերութեան խնդրանքով,

[1] ԱՐՀ. Արարատեան, 1846, Թ. 257:
[2] Անդ:
[3] Անդ:

[4] Ibid. էջ 108—109:
[5] Ibid. հ. II, էջ 236:
[6] Ibid. հ. II, էջ 236:

© National Library of Armenia